


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 138505 գործարքներ, որոնց քանակը 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 23.5%-ով:


2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված



գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 54561 օտարման գործարքների 86.1% կազմել են առուվաճառքները, 13.2%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 33.5% արձանագրվել է Երևան քաղաքում իսկ 34.2%՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 19.4%-ով: 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 14734 առուվաճառքի գործարքների 63.3% արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 0.4%-ով:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները

Համայնքներ	Միջին գները /դրամ/	
	հունվար- նոյեմբեր 2006թ.	հունվար- նոյեմբեր 2007թ.
Կենտրոն	375300	445900
Արաբկիր	295900	358700
Քանաքեռ-Զեյթուն	182700	263800
Նոր-Նորք	169000	227000
Ավան	153900	217300
Էրեբունի	152000	224800
Շենգավիթ	180500	239700
Դավթաշեն	186900	247700
Աջափնյակ	169900	232300
Մալաթիա- Սեբաստիա	165300	220500
Նուբարաշեն	107100	124700
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>194400</b>	<b>254800</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ շինության շուկայական միջին գների աճը կազմել է 31.1%:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 5583 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9.9%-ով:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի

բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		հունվար- նոյեմբեր 2006թ.	հունվար- նոյեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	63900	102800
	Այարան	25600	28900
	Թալին	24800	36400
Արարատ	Արտաշատ	49800	82100
	Մասիս	59000	93500
	Վեդի	40500	60100
	Արարատ	41700	55700
Արմավիր	Վաղարշապատ	84800	125600
	Արմավիր	56000	91200
	Մեծամոր	36300	58400
Գեղարքունիք	Սևան	36700	61200
	Գավառ	25800	34800
	Մարտունի	38800	51300
	Վարդենիս	20700	26300
	Ճամբարակ	12900	14700
Լոռի	Վանաձոր	49700	71000
	Ստեփանավան	24800	36100
	Մայիտակ	34300	46200
	Ալավերդի	20600	25300
	Տաշիր	20200	25000
	Թումանյան	5300	5400
	Շամլուղ	2800	3000
	Ախթալա	10500	11700
Կոտայք	Արովյան	96000	141800
	Նոր Հաճն	65300	99700
	Բյուրեղավան	45800	71700
	Եղվարդ	60000	89900
	Հրազդան	37100	50500
	Ծաղկաձոր	71900	94100
	Չարենցավան	41900	61000
Շիրակ	Գյումրի	49400	69600
	Արթիկ	31000	44500
	Մարայիկ	21800	25000
Սյունիք	Գորիս	51400	71400
	Կապան	43300	65000
	Սիսիան	36000	52400
	Մեղրի	28400	38000
	Ագարակ	19800	24600
	Քաջարան	25300	33000
	Դաստակերտ	6500	6900
Վայոց Ձոր	Վայք	37600	59600
	Եղեգնաձոր	54900	73600
	Ջերմուկ	63500	105200
Տավուշ	Դիլիջան	44500	66700

Իջևան	53600	88300
Բերդ	29200	33800
Նոյեմբերյան	18400	27800
Այրում	18000	19300

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների աճը կազմել է 44.9%:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 6067 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1396, մյուս մարզերում միասին վերցրած՝ 4671: 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 22.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 20.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 23.3%-ով:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/	
	հունվար- նոյեմբեր 2006թ.	հունվար- նոյեմբեր 2007թ.
Կենտրոն	383900	455700
Արաբկիր	301300	368300
Քանաքեռ-Զեյթուն	185300	267700
Նորք-Մարաշ	187300	229600
Ավան	156400	220900
Էրեբունի	154900	229100
Շենգավիթ	182700	242800
Դավթաշեն	189100	252500
Աջափնյակ	172200	236400
Մալաթիա-Սեբաստիա	167900	223800
Նուբարաշեն	109100	127300
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>199100</b>	<b>259500</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 30.3 %:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժներն ունեն աճի միտում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		հունվար- նոյեմբեր 2006թ.	հունվար-նոյեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	66200	106200
	Ապարան	27100	32600
	Թալին	26000	39100
Արարատ	Արտաշատ	51100	85400
	Մասիս	60100	96700
	Վեդի	41800	62800
	Արարատ	42900	59700
Արմավիր	Վաղարշապատ	86100	128500
	Արմավիր	57100	93600
Գեղարքունիք	Սևան	40400	63400
	Գավառ	27100	37800
	Մարտունի	40100	53900
	Վարդենիս	22200	29900
	Ճամբարակ	14400	17600
Լոռի	Վանաձոր	51100	75500
	Ստեփանավան	27200	39500
	Սպիտակ	35600	49400
	Ալավերդի	21900	28500
	Տաշիր	21600	27300
	Թումանյան	6900	8100
	Շամլուղ	4300	5400
	Ախթալա	12000	14200
Կոտայք	Արուվյան	97700	146700
	Նոր Հաճն	66500	104400
	Բյուրեղավան	46900	74100
	Եղվարդ	61100	93500
	Հրազդան	38300	53800
	Ծաղկաձոր	73700	127500
	Չարենցավան	43100	63300
Շիրակ	Գյումրի	50900	73800
	Արթիկ	32200	46900
	Մարալիկ	23600	27800
Սյունիք	Գորիս	52700	74300
	Կապան	44300	68100
	Միսիան	37200	55500
	Մեղրի	29600	40700
	Ագարակ	21300	26800

	Դաստակերտ	8700	9500
Վայոց Ձոր	Վայք	38800	62000
	Եղեգնաձոր	56300	76200
	Ջերմուկ	36400	53400
	Դիլիջան	45500	70000
Տավուշ	Իջևան	54600	90800
	Բերդ	30400	36700
	Նոյեմբերյան	19400	31100
	Այրում	19200	20600

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ աճել են 48.1%:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 22288 միավոր /16262.51 հա/ հողեր, որից Երևանում՝ 1695 միավոր /223.58 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն օտարվել են 1061 միավոր /192.22 հա/ հողեր, որից Երևանում՝ 489 միավոր /45.24 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 9447 միավոր /14557.29 հա/, որից Երևանում՝ 64 միավոր /12.24 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 8318 միավոր /775.14 հա/, որից Երևանում՝ 1130 միավոր /127.22 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 4076 միավոր /483.65 հա/, որից Երևանում՝ 463 միավոր /72.49 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 247 միավոր /281.12 հա/, որից Երևանում՝ 38 միավոր /11.64 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 178 միավոր /161.50 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 21 միավոր /2.80 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /1.00 հա/:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 20972 միավորի /15716.78 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 1586 միավոր /212.05 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1185 միավոր /520.09 հա/, որից Երևանում՝ 68 միավոր /7.63 հա/ և փոխանակության գործարքներ՝ 131 միավոր /25.64 հա/, որից Երևանում՝ 41 միավոր /3.90 հա/:

Հանրապետությունում 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 29.2%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 20.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել 39.6%-ով, արդյունաբերական օբյեկտների

հողերի նկատմամբ՝ նվազել 28.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 5754.78 հա, որից 5646.63 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 39.8%-ը կամ 8341 գործարքներ /8136.62 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 550 միավոր /77.11 հա/, իսկ 59.9%-ը կամ 12564 միավորը /7525.06 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 1010 միավոր /133.78 հա/: 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են վարձակալության իրավունքի վաճառքի 67 գործարք /55.10 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	30	10.38	251	22.50	269	44.24	54	9.39	8	1.27	795	97.92	153	25.20
Արագածոտն	575	2101.02	9	2.90	45	6.67	211	10.96	681	892.82	0	0.00	569	54.53	30	1.68
Արարատ	377	640.95	45	18.08	618	57.83	377	14.26	996	520.40	4	0.44	924	81.96	46	3.70
Արմավիր	542	2651.44	27	3.66	56	3.87	190	5.71	1286	2995.18	3	0.20	1146	92.04	90	2.68
Գեղարքունիք	118	257.71	6	6.03	128	16.28	329	36.58	231	225.23	0	0.00	151	20.02	30	3.85
Լոռի	90	112.32	11	1.33	72	5.76	287	21.24	499	466.38	6	138.08	111	12.37	57	3.00
Կոտայք	778	1135.85	32	13.06	252	22.61	739	81.64	1581	932.25	10	17.08	1751	159.20	147	23.63
Շիրակ	45	40.60	13	33.94	285	17.34	211	9.38	185	245.46	1	0.03	80	7.68	33	2.88
Սյունիք	38	72.99	10	6.35	12	0.70	177	6.73	134	143.53	4	20.16	36	3.76	38	2.22
Վայոց Ձոր	113	351.37	1	0.55	29	2.15	259	79.80	94	107.49	0	0.00	66	6.87	27	36.60
Տավուշ	68	27.90	20	6.92	202	15.44	252	36.75	305	127.38	5	0.44	135	12.15	26	7.96
Ընդամենը	2744	7392.15	204	103.20	1950	171.15	3301	347.29	6046	6665.51	41	177.70	5764	548.50	677	113.40

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդային վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	317	38.32	29	10.25	74	4.69	214	23.38	233	38.79	0	0.00	1	0.13	177	17.81	55	20.85
Արագածոտն	26	0.55	2	0.23	0	0.00	24	0.32	811	2076.01	572	2056.02	7	2.67	45	6.67	187	10.65
Արարատ	89	1.74	3	0.70	9	0.24	77	0.80	1327	709.38	376	620.95	42	17.38	609	57.59	300	13.46
Արմավիր	59	2.00	6	1.25	6	0.24	47	0.51	744	2652.08	530	2640.85	21	2.40	50	3.63	143	5.20
Գեղարքունիք	63	15.87	3	0.30	4	4.25	56	11.32	518	300.75	118	257.71	3	5.73	124	12.04	273	25.27
Լոռի	18	0.36	1	0.01	5	0.20	12	0.15	442	140.28	90	112.32	10	1.31	67	5.55	275	21.10
Կոտայք	110	15.23	7	6.18	24	2.70	79	6.35	1688	1233.84	775	1131.77	25	6.88	228	19.90	660	75.29
Շիրակ	67	35.36	2	32.08	17	0.49	48	2.79	487	65.89	45	40.60	11	1.86	268	16.85	163	6.58
Սյունիք	29	3.16	5	0.69	3	0.18	21	2.29	207	82.53	37	71.93	5	5.65	9	0.51	156	4.44
Վայոց Ձոր	31	5.12	1	0.55	0	0.00	30	4.57	371	428.75	113	351.37	0	0.00	29	2.15	229	75.23
Տավուշ	139	6.35	11	4.26	26	1.21	102	0.88	398	78.61	63	25.86	9	2.66	176	14.23	150	35.86
Ընդամենը	948	124.06	70	56.50	168	14.20	710	53.36	7226	7806.91	2719	7309.38	134	46.67	1782	156.93	2591	293.93

Հանրապետությունում 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 25 գործարքներ /82.77 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդային վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 58.2%: Ընդ որում Երևանում աճել է 2.5 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 56.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդային վաճառքի գործարքների քանակն աճել է 31.7%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել 54.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել 98.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 2.2 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	477	1429.72	34.1	12381.8	474.0	471	494.22	362.2	6772.5	2630.6
Սպարան	20	147.34	26.8	277.9	117.2	39	29.55	90.6	767.6	365.2
Թալին	75	478.96	33.9	756.0	80.5	137	320.86	90.6	758.5	382.5
Ծաղկահովիտ						21	32.85	77.0	948.2	170.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	152	205.90	29.8	2676.2	972.4	409	176.68	335.1	5418.0	1427.9



Մասիս	82	118.55	29.9	6212.5	506.4	213	118.04	181.1	6772.5	1817.9
Վեդի	142	296.50	31.7	3057.6	632.8	361	218.02	203.8	4515.0	1219.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	151	668.18	12.3	2000.0	180.9	334	456.14	294.3	4063.5	905.1
Բաղրամյան	195	1532.41	20.3	802.5	137.8	250	2100.55	90.6	677.3	565.3
Վաղարշապատ	184	440.26	19.2	2464.0	299.5	665	412.07	443.7	9030.0	1537.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	16	16.23	96.8	236.3	162.0	106	68.60	190.2	496.7	365.1
Ճամբարակ	34	51.62	108.0	1450.0	346.1	27	22.60	45.3	541.8	149.1
Մարտունի	2	0.40	1155.0	2442.0	1798.5	18	3.84	45.3	1806.0	470.7
Սևան	19	140.99	104.3	3515.4	861.3	19	20.85	45.3	451.5	193.7
Վարդենիս	47	48.47	184.2	700.0	392.4	61	109.35	27.2	532.8	244.9
Լոռու մարզ										
Այվերդի	70	72.06	210.0	2971.5	668.2	286	129.02	163.0	2483.3	1059.3
Գուգարք	12	29.43	194.3	740.0	509.1	51	41.09	226.4	2709.0	931.3
Սպիտակ	1	2.00	130.0	130.0	130.0	16	8.46	226.4	1490.0	512.5
Ստեփանավան	6	6.24	450.0	2112.0	1257.9	65	188.40	90.6	2257.5	362.3
Տաշիր	1	2.60	740.0	740.0	740.0	70	85.56	45.3	451.5	203.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	329	366.46	11.8	5700.0	549.9	630	228.98	271.7	11287.5	3316.9
Եղվարդ	299	586.19	34.6	8010.0	451.5	793	518.61	172.1	11287.5	2341.4
Հրազդան	147	179.12	29.0	76923.1	610.1	145	180.41	113.2	2709.0	918.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	9	11.56	14.1	314.6	160.8	83	79.17	249.0	1693.1	447.4
Ամասիա	1	1.49	59.1	59.1	59.1	17	48.77	36.2	237.0	113.1
Անի	9	8.21	77.2	1736.2	291.8	51	77.35	108.7	361.2	237.2
Աշոցք						15	20.24	45.3	165.0	116.0
Արթիկ	26	19.35	47.3	1741.2	283.6	16	13.30	63.4	1083.6	171.2
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.50	760.0	760.0	760.0	31	44.38	90.6	673.3	338.9
Կապան	26	50.63	83.3	4800.0	962.3	13	11.78	54.3	841.6	225.1
Մեղրի	3	15.60	36.8	1000.0	734.2	46	19.78	181.1	1784.2	474.5
Միսիան	7	5.20	260.0	792.0	511.2	44	67.59	45.3	631.2	226.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	78	246.15	32.8	928.0	219.4	70	84.16	117.7	2524.8	1283.9
Վայք	35	105.22	19.6	587.9	165.9	23	23.14	54.3	1430.7	510.1
Տավուշի մարզ										
Բերդ	5	1.82	361.4	750.0	512.1	91	25.40	45.3	841.6	351.8
Իջևան	52	20.49	120.0	2331.0	651.7	35	14.83	240.0	1683.2	807.2
Նոյեմբերյան	6	3.55	217.7	2655.0	1038.1	178	87.02	45.3	3509.5	518.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների			
	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	31	41084.0	112.7	2520.0	338.5	519	469896.7	113.2	3612.0	2284.0
Ապարան	3	2847.0	105.5	249.8	149.9	22	32470.0	113.2	632.1	191.6
Թալին	11	22722.0	49.0	116.6	89.5	20	33606.0	45.3	361.2	93.1
Ծաղկահովիտ						4	5770.0	45.3	361.2	69.0
Արարատի մարզ										
Արտաշատ	319	323250.0	113.8	1056.0	295.4	215	225544.0	135.8	2709.0	881.9
Մասիս	219	188691.0	57.2	1741.7	597.8	530	403770.0	135.8	9030.0	1127.2
Վեդի	71	63989.9	173.7	1171.3	624.1	167	178683.0	113.2	993.3	640.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	5898.0	105.9	2061.8	1201.1	218	219096.8	135.8	2257.5	1070.4
Բաղրամյան						16	19180.0	81.5	270.9	129.2
Վաղարշապատ	44	30359.0	249.5	3828.0	2712.1	904	673373.0	135.8	4515.0	1427.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	54.0	1296.3	1296.3	1296.3	27	35461.0	135.8	903.0	351.1
Ճամբարակ	3	1735.0	90.0	120.0	101.7	10	12644.0	45.3	135.5	95.7
Մարտունի	110	109763.0	42.5	157.3	82.7	60	79721.0	90.6	451.5	230.2
Սևան	8	6800.0	187.4	434.8	286.2	26	27640.3	90.6	903.0	145.0
Վարդենիս	2	2000.0	175.0	175.0	175.0	28	44757.0	45.3	225.8	105.5
Լոռու մարզ										
Ալավերդի						26	33072.0	67.9	270.9	123.5
Գուգարք	44	36402.0	67.0	10900.0	2806.3	50	55905.6	67.9	2347.8	537.7
Սյիտակ	8	6000.0	55.2	528.0	254.4	14	15610.0	63.4	451.5	122.1
Ստեփանավան	15	13106.0	75.6	277.2	186.2	18	17435.0	45.3	270.9	100.5
Տաշիր						1	750.0	45.3	135.5	67.9
Կոտայքի մարզ										
Արույան	117	109729.0	270.0	2425.0	1601.6	838	736494.9	135.8	6772.5	1736.1
Եղվարդ	52	40074.0	172.0	4749.0	2150.9	750	702962.0	135.8	6772.5	1867.7
Հրազդան	59	49210.0	121.1	9912.5	1004.1	150	139862.5	135.8	9030.0	1216.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	179	120416.1	126.0	23333.3	5217.5	47	36369.3	113.2	1535.1	321.7
Ամասիա						1	1000.0	45.3	135.5	68.5
Անի	1	2543.0	115.4	115.4	115.4	8	8798.0	67.9	180.6	96.1
Աշոցք						3	8600.0	40.8	135.5	56.9
Արթիկ	88	45533.0	24.3	900.0	242.4	21	22030.0	67.9	925.6	157.4
Սյունիքի մարզ										
Գորիս	1	600.0	1200.0	1200.0	1200.0	10	8641.0	67.9	541.8	230.7
Կապան	8	4539.0	55.2	5363.6	2040.0	7	6667.0	67.9	632.1	198.9
Մեղրի						12	12720.0	67.9	406.4	114.1
Սիսիան						7	9530.0	67.9	406.4	134.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	28	20780.0	75.6	1150.0	395.1	55	55243.0	67.9	1128.8	280.4
Վայք	1	700.0	447.9	447.9	447.9	8	9680.0	77.0	632.1	116.1
Տավուշի մարզ										
Բերդ						5	1746.0	45.3	632.1	84.2
Իջևան	170	138605.0	76.0	2300.0	1355.1	114	101282.0	67.9	1354.5	395.3
Նոյեմբերյան	6	3693.0	69.0	447.1	415.3	15	18340.0	45.3	632.1	126.0

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 22 գործարքներ 5.37 հա մակերեսով, ընդ որում 9-ը՝ Գեղարքունիքի /0.45 հա/, 6-ը՝ Լոռու /0.37 հա/, 1-ը՝

Սյունիքի /0.20 հա/ և 2-ական՝ Արարատի /0.20 հա/, /0.10 հա/ Կոտայքի, /4.06 հա/ Շիրակի մարզերում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9505 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 9.8% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 25.8%-ով:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 778 բնակարանների, 350 անհատական բնակելի տների, 3295 հասարակական, 428 արտադրական նշանակության օբյեկտների, 4598 միավոր /31518.12 հա/ հողերի, 55 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 343 վարձակալության գործարքների, այդ թվում 176 միավոր /8.94 հա/ կառուցապատման իրավունքով, քանակները 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 38.9%-ով:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 31518.12 հա հողերից 90.38 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 31427.74 հա հողերի 108.19 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 110.28 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 15065.75 հա, որից 2757.24 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 6965.05 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	8	1240.00	304	1563.72
Արարատ	13	387.00	171	546.80
Արմավիր	1	10.00	102	453.84
Գեղարքունիք	160	2909.56	476	1509.19
Լոռի	3	290.00	493	2214.68
Կոտայք	7	730.00	164	284.29
Շիրակ	4	30.00	548	1955.82
Սյունիք	27	1142.65	126	1614.59
Վայոց Ձոր	0	0.00	53	767.80
Տավուշ	2	225.84	57	129.52
<b>Ընդամենը</b>	<b>225</b>	<b>6965.05</b>	<b>2494</b>	<b>11040.25</b>

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 22147 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 84.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.4%/, առանձնատների /25.1%/ և հողերի /11.8%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8952 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ աճել է 48.0%-ով:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 6473.06 հա մակերեսով հողեր, որից 90.95 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 90.9% կամ 5885.15 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 2.12 հա: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 3345.70 հա, որից 3342.31 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 65 և 38 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 67.4%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Շիրակի մարզում /19.4%:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 23039 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 23.8%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /39.6%/: Առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***